# Հետազոտական աշխատանք

**Առարկա՝** Հայոց լեզու և գրականություն

**Թեմա՝Ուսուցման ժամանակակից մեթոդներ**

**Կազմեց՝ Գայանե Զաքարյան**
**2-րդ խումբ**

<<Ա.Մարգարյանի անվան Կապանի թիվ 7 հիմն. դպրոց>>ՊՈԱԿ

**Ղեկավար՝** Լուսինե Գրիգորյան

**Կապանի N2 ավագ դպրոց՝ՊՈԱԿ**
Վերապատրաստող կազմակերպության անվանում

**Կապան 2023**

# Բովանդակություն

Նախաբան----------
-3

Գրականության ակնարկ----------6

Ուսուցման ժամանակակից մեթոդներ----------8

Խթանման փուլի ակտիվ մեթոդներ----------9

Իմաստի ընկալման փուլի ակտիվ մեթոդներ----------12

Կշռադատման փուլի ակտիվ մեթոդներ----------14

Եզրակացություն----------17

Գրականության ցանկ----------18

Հավելված----------19

## Նախաբան

Աշխարհը բարելավելու համար հարկավոր է դառնալ դեպի դրական կրթական մեթոդներ։Այն պահից, երբ բացահայտվեն առավել արդյունավետ մեթոդներ, կրթությունը կդառնա գրեթե միակ համապատասխան բնագավառը, որը կարող է բարելավել կյանքը։

Բ.Ֆ.Սքիներ

Այսօրվա ուսուցչի աշխատանքը անհամեմատ ծանր ու բարդ է,քանի որ նա այլևս չի հանդիսանում գիտելիքի,<<լույսի>> միակ կրողն ու փոխանցողը։Ուսուցչի հետ անհավասար մրցակցության մեջ է մտել համացանցը՝ իր անծայրածիր հնարավորություններով։Այո,այնտեղից աշակերտները շատ բան կարող են սովորել,բայց միայն ուսուցիչը կարող է անհատական մոտեցում,ճիշտ ընտրված մեթոդ ու հնար կիրառել արդյունքի հասնելու համար։

Ժամանակակից կրթության մեծագույն խնդիրներից մեկն այն է, որ աշակերտների ուշադրությունը գրավված է ամենատարբեր գործունեության տեսակներով։ Եվ այդ մրցակցության մեջ կրթությունը պարտվողի դերում է։ Մեզանում ընդունված է, որ ի տարբերություն չափահասների՝ երեխաները ոչնչով զբաղված չեն։ Հետևաբար՝ նրանք պետք է միայն պարապեն ու սովորեն։ Բայց այսօր աշակերտներն այլևս պարապ չեն։ Նրանք զբաղված են տարատեսակ սիրողական ու պրոֆեսիոնալ խմբակներ հաճախելով,ֆուտբոլային հանդիպումներ, սերիալներ դիտելով ու տարատեսակ խաղերով։ Աշակերտներին բավականաչափ զբաղեցնում են նաև սոցիալական ցանցերը։ Մի խոսքով՝ սովորելու ժամանակ շատ քիչ է մնում։ Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը։Եվ ահա այստեղ է, որ յուրաքանչյուր ուսուցիչ

փնտրում կամ ստեղծում է անհրաժեշտ մեթոդներ, այլ կերպ ասած՝ գործիքներ,ճանապարհներ կրթության որակը բարելավելու համար։

Արդի պայմաններում կրթությունը մրցունակ տնտեսության ապահովման և ազգային անվտանգության գրավական է: Այսօր առավել, քան երբևէ կրթական համակարգը պետք է օգտագործի իր ներուժը հասարակությանը համախմբելու, սոցիալական լարվածությունը, հակամարտությունները հաղթահարելու ուղղությամբ։

«Ազգի կրթության ճիշտ կազմակերպումը պետության հզորությունն ապահովող ռազմավարություն է, կրթությանը սատար կանգնելը՝ հայրենասիրություն»: Այս կարգախոսով պետք է առաջնորդվի կրթության բնագավառի յուրաքանչյուր նվիրյալ: Կրթական համակարգը կոչված է ձևավորելու այնպիսի անհատներ, որոնք ի վիճակի կլինեն կատարելագործելու, փոփոխելու և զարգացնելու հասարակությունը:Արդի աշխարհում տեղի են ունենում գլոբալ զարգացումներ, սրընթաց փոփոխություններ. ավելի քան կարևորվում են կրթական առաջնահերթ խնդիրները, որոնք բխում են համաշխարհային կրթական զարգացումներից։

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները։ Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը։ Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ։ Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար։ Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը։ Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար։ Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի։ Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»։ Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է։ Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում։ Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ

իրավիճակում կարող են օգտակար լինել: Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան: Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել, իսկ դասը ստեղծագործական պրոցես է և պետք է լինի հետաքրքիր և մոտիվացնող:Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը:

Հետազոտության ընթացքում անդրադարձել ենք ուսուցման մեթոդների արդյունավետությանը և փորձել ենք կոնկրետացնել և բացահայտել ուսուցման այս կամ այն մեթոդի արդյունավետությունը գործնականում: Հետազոտության նպատակն է կիրառել և բացահայտել ուսուցման մեթոդների արդյունավետությունը:

## Գրականության ակնարկ

*Մեթոդը* հունարեն «մեթոդոս» բառն է, որը նշանակում է ուղի, եղանակ։ Մեթոդը նպատակին հասնելու միջոց է, ճանապարհ։

Ուսուցման մեթոդները բազմաթիվ են ու բազմաբնույթ։ Մանկավարժական վարպետություն ունեցող ուսուցիչը իր ուսումնական գործունեության ընթացքում, իրենից անկախ, կիրառում է այնպիսի մեթոդներ ու հնարներ, որոնք, նույնիսկ, մանկավարժությանը հայտնի չեն։

Մանկավարժության մեջ մեթոդը հասկացվում է մի կողմից որպես ուսուցչի, իսկ մյուս կողմից՝ որպես սովորողի գործունեության եղանակ։ Այլ կերպ ասած՝ մեթոդը փոխազդեցության, փոխգործողության եղանակ է ուսուցչի և աշակերտի միջև ։[1] Կարելի է ասել՝ մեթոդն ուսուցչի համար դասավանդման, իսկ աշակերտի համար ՝ գիտելիքները, կարողություններն ու հմտությունները յուրացնելու եղանակ է:Ուսուցման մեթոդը ուսուցչի՝ աշակերտի իմացական և պրակտիկ գործունեությունը կազմակերպող, հաջորդական գործողությունների համակարգ է, որը հանգեցնում է կրթության բովանդակության յուրացմանը, ասել է թե՝ ուսուցման նպատակների իրականացմանը։ Ուսուցման մեթոդն իր գործառության մեջ ենթադրում է որոշակի ուսումնական նպատակի և վերջինս իրականացնելու համար անհրաժեշտ գործողությունների ու համապատասխան միջոցների առկայություն։ Այլ խոսքով՝ ուսուցման մեթոդը, ուսուցման նպատակների իրականացմանն ուղղված մանկավարժի և սովորողների փոխկապակցված ու փոխպայմանավորված գործունեության եղանակ է կամ այլ կերպ՝ ուսումնական խնդիրների լուծմանը

[1] Յու.Ա. Ամիրջանյան,Ա.Ս.Սահակյան, Մանկավարժություն «Մանկավարժ» 2005, էջ157

միտված, սովորողների իմացական և պրակտիկ գործունեությունը կազմակերպող մանկավարժի նպատակաուղղված գործողությունների համակարգ:

Մանկավարժության մեջ, սկսած վաղ ժամանակներից, կուտակվել են ուսուցման բազմաթիվ ու բազմաբնույթ մեթոդներ, որոնց՝ ըստ խմբերի դասակարգումը դարձել է հրատապ խնդիր:

Այսպես՝

1.Ե. Ա. Գոլանտը, Ս. Ի. Պերովսկին ուսուցման մեթոդները դասակարգել են երեք խմբերում՝ խոսքային, զննական, և գործնական: Դասակարգելիս հիմք են ընդունել ինֆորմացիայի ընբռնման բնույթը:

2.Մ. Ա. Դանիլովը և Բ. Պ. Եսիպովը, ելնելով ժամանակակից դիդակտիկայի խնդիրներից, նույնպես դասակարգել են ուսուցման մեթոդները . նոր գիտելիքներ ձեռք բերող մեթոդներ, կարողություններ, հմտություններ մշակող մեթոդներ, ստեղծագործական գործունեություն ձևավորող մեթոդներ, գիտելիքները, կարողություններն ու հմտությունները ամրակայող, վերահսկող և ստուգող մեթոդներ:

3.Մ. Սկատիկինը հիմք ընդունելով կրթության բովանդակության յուրացման մեջ սովորողների իմացական հնարավոր բնույթը, առանձնացրել է ուսուցման հետևյալ մեթոդները՝ բացատրական-ցուցադրական, ինֆորմացիոն-ռեցեպտիվ, վերարտադրողական, պրոբլեմային շարադրանք, մասնակի որոնողական կամ էվրիստիկական և հետազոտական:

Ուսուցման մեթոդների դասակարգմամբ զբաղվել են նաև մանկավարժ գիտնականներ՝ Ա. Ն. Ալեքսյուկը և Ի. Դ. Զվերևը, Վ. Ֆ. Պալամարչուկը և Վ. Ի Պալամարչուկը , Ս. Գ. Շապավալենկոն և ուրիշներ, իսկ ահա Յու. Կ. Բաբանսկին ընդհանրացրել է ուսուցման մեթոդների մասին պատկերացումները, տեսակետներն ու այլ հանգամանքներ: Որպեսզի աշակերտները ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռվեն: Ընդ որում՝ դա պետք է արվի կանոնավոր և շարունակական ձևով: Այլ կերպ ասած՝ պետք է կարևորել ոչ միայն ուսումնական

ծրագրի ընդգրկումը, խորությունը այլև մատուցումը։Իսկ դա հնարավորինս լավ կարելի է անել ուսուցման մեթոդների միջոցով, որոնք ինչպես տեսանք մշտապես զբաղեցրել են մանկավարժական միտքը։

## Ուսուցման ժամանակակից մեթոդներ

<<Ուսուցման մեթոդը>> բարդ և բազմակողմանի հասկացություն է:
Առաջին հերթին դա պայմանավորված է հենց ուսուցման գործընթացի բարդությամբ: Վերջինս իր մեջ ներառում է 3 կարևոր խնդիր՝ ի՞նչ սովորեցնել/կրթության բովանդակություն/, ինչու՞, ինչի՞ համար սովորեցնել/կրթության նպատակներ/ և ինչպե՞ս սովորեցնել/ուսուցման մեթոդիկա/: Հանդիսանալով ուսուցման գործընթացի միջուկը՝ մեթոդը իրար է կապում ուսուցման՝ նախապես պլանավորած նպատակը և վերջնարդյունքը:Այսպիսով՝ ուսուցման գործընթացում մեթոդը ունի կապող օղակի բարդ և առանձնահատուկ դեր, դե իսկ ուսուցիչների հմտության շնորհիվ այդ կիրառված մեթոդները դասապրոցեսները էլ ավելի արդյունավետ և հետաքրքիր են դարձնում:
Ուսուցչը պետք է կարողանա ճիշտ ընտրել ուսուցման մեթոդները: Ուսուցման այս կամ այն մեթոդի ընտրությունը, նախևառաջ, պայմանավորված է տվյալ առարկայի չափորոշչային և ծրագրային պահանջներով և ուսուցման նպատակներով:Պետք է հիշել,որ մեթոդն ինքնին ընդամենը գործիք է դասի նպատակին հասնելու համար. կարևոր է ճիշտ ընտրել և օգտագործել այդ գործիքը ուսուցման նախապես պլանավորած նպատակներին հասնելու համար:
Իմ մանկավարժական գործունեության ընթացքում դասապրոցեսները մշտապես վարել եմ ԽԻԿ/խթանում,իմաստի ընկալում,կշռադատում/ ժամանակակից մեթոդների համակարգով և գտնում եմ,որ արդյունավետ,կազմակերպված ու հիմնականում հաջողված դասեր են ստացվում:

Այս համակարգով աշխատելիս նպատակահարմար է առաջնորդվել դասի տարբեր փուլերում կիրառման համար երաշխավորելի մեթոդներով։
Այսպես՝

## Խթանման փուլի ակտիվ մեթոդներ

Խթանման փուլի հմնական նպատակներից են՝

- նոր նյութի վերաբերյալ բացահայտել սովորողների գիտելիքները
- ակտիվացնել աշակերտներին
- ձևավորել գիտելիքներ,հմտություններ ձեռք բերելու ձգտում։

Այս փուլում առավել արդյունավետ են հետևյալ մեթոդները՝ մտագրոհ,խմբավորում,պրիզմա,մտածիր-զույգկազմիր-քննարկիր,ձնագնդի,5 րոպեանոց ազատ շարադրանք,ԳՈՒՍ և այլն։

Վերոնշյալ մեթոդներից մեր աշխատանքում կանդրադառնանք մի քանիսին, որոնք առավել գործածական են մեզանում, և որոնց արդյունավետությունը արդեն հասցրել ենք նկատել։

Այսպես՝ յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը,մուտքը։ Մարդկանց մոտ սովորաբար տպավորվում է հաղորդակցության սկզբի և վերջի հատվածները։ Հաղորդակցման առաջին րոպեներին է մարդը որոշում դիմացինին լսել, թե ոչ։ Այդ առումով դասի հաջող սկիզբը շատ կարևոր է։ Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետ ընթացքին։ Դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից մեկը «Մտքերի տարափ կամ մտագրոհն» է։ Մտագրոհի միջոցով

ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Ընդ որում՝ մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը:Կարևոր է նաև, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի համար պարզ դառնա նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները: Մտքերի տարափը կամ մտագրոհը խմբային (թիմային) աշխատանքի պարզագույն, բայց շատ արդյունավետ մեթոդ է: Այս մեթոդը մտքերի տարափ են ավանում, քանի որ խրախուսվում են պարզապես ուսումնասիրվող նյութին այս կամ այն կերպ առնչվող բառեր թվարկելն ու գաղափարներ արտահայտելը: Երեխաներից յուրաքանչյուրը արտահայտում է սեփական տեսակետները՝ առանց որևէ մեկնաբանության կամ գնահատական տալու փորձի: Մտագրոհի մեթոդը կիրառելիս արտահայտված բոլոր մտքերն ու գաղափարներն ընդունելի են, «սխալ» չկա:

Կանոններ « մտագրոհ» մեթոդով աշխատելու համար.

1. ցանկացած քննադատության բացակայություն,
2. գաղափարների խրախուսում,
3. մասնակիցների հավասարություն,
4. զուգորդումների (ասոցիացիաների) ազատություն,
5. բոլոր մտքերի գրառում:

Վերջին տարիներին մասնագետները մտահոգություն են հայտնել մտագրոհի հետ կապված: Բանն այն է, որ դասերի ժամանակ ակտիվ աշակերտները մենաշնորհում են մտագրոհը: Դանդաղ մտածող, ոչ ակտիվ աշակերտները կարող են դուրս մնալ մտագրոհից:Դրա համար առաջարկվում է օգտագործել նաև մտագրոհի գրավոր տարբերակը: Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է թղթի վրա գրել իրենց մտքերը և հանձնել իրեն: Այս մոտեցումը չի փոխարինում բանավոր մտագրոհին, պարզապես լրացնում է այն:

Հաջորդ առավել կիրառելի մեթոդը մեզ համար <<Հինգ րոպեանոց ազատ շարադրանքն>> է:Այս մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում ենք աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանքը:

Նպատակահարմար է,օրինակ,ստեղծագործության վերնագրի կամ նկարազարդման շուրջ շարադրանքը:

Դասը սկսելու շատ հայտնի հնար է նաև ԳՈՒՍ-ը: Դասասկզբում ուսուցիչը գծում է Մ-աձև աղյուսակ, որի ձախ սյունակում գրում է՝ գիտեմ, կենտրոնում՝ ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը: Դասի թեման հայտնելուց հետո ուսուցիչը դիմում է աշակերտներին հետևյալ հարցով. ի՞նչ գիտեք այս թեմայի, հասկացության մասին: Ապա լրացվում է գիտեմ սյունակը: Հաջորդիվ աշակերտներին հարցնում է՝ ի՞նչ եք ուզում իմանալ այդ թեմայի մասին: Եվ լրացնում է ուզում եմ իմանալ սյունակը: Դասի վերջում լրացվում է սովորեցի սյունակը:




Շատ հարմար է հատկապես, երբ գրականությունից անցնում ենք ստեղծագործություն,որի հեղինակին արդեն այլ առիթներով անդրադարձել ենք և ունենք նախնական գիտելիքներ կամ լեզվական,քերականական նյութեր անցնելիս կրկին կարող ենք վերհանել արդեն ունեցած գիտելիքները և լրացնել նորով:

## Իմաստի ընկալման փուլի ակտիվ մեթոդներ

Իմաստի ընկալման փուլի նպատակներից են

- Սովորողների մոտ հետաքրքրության աճի պահպանումը
- Տեղեկատվության ընկալման ապահովումը
- Հին և նոր տեղեկատվության շաղկապումը
- Իմացության նոր կառույցի ստեղծումը:

Իսկ այս փուլում նպատակահարմար է կիրառել հետևյալ մեթոդները՝
T-աձև կամ M-աձև աղյուսակ,գաղափարների քարտեզ,Վենի դիագրամ,փոխգործուն նշանների համակարգ,խորանարդում,խճանկար,երեք բանալի և մեկ կողպեք, շրջագայություն պատկերասրահում և այլն:
Իմաստի ընկալման փուլի համար նախատեսված մեթոդներից կանդրադառնանք Վեննի դիագրամ, T-աձև, կամ M-աձև աղյուսակ մեթոդներին:
Այսպես՝ Վեննի դիագրամը կառուցվում է երկու շրջանագծերով, որոնք հատման մակերես ունեն կենտրոնում: Այդ դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունը ցույց տալու նպատակով: Օրինակ՝ ուսուցիչը ցանկանում է, որ աշակերտները նյութը ընթերցելուց հետո բնութագրեն կերպարներին և գտնեն նրանց ընդհանրությունները: Նա խնդրում է աշակերտների զույգերին գծել Վեննի դիագրամ, մի շրջանագծում բնութագրել մի հերոսին, մյուս շրջանագծում՝ երկրորդին: Հետո միանալ այլ զույգերի, համեմատել դիագրամները, այնուհետև հատվող մասը լրացնել:



« T-աձև, կամ M-աձև աղյուսակ » -ը մեթոդի էությունն այն է, որ օգտագործվում է նույն հասկացությունը երկու կողմերը համեմատելու համար: Շատ պարզ է, բայց միևնույն ժամանակ կազմակերպված, կառուցվածքային և կարելի է կիրառել ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի ժամանակ:

T- տառը հիշեցնող աղյուսակը բաժանվում է երկու մասի, ուր գրանցվում են միևնույն հասկացության հակադիր որակներ՝ դրական և բացասական: Աղյուսակի այս ձևը հարմար է քննարկումների ժամանակ երկու տարբեր պատասխանի համադրություն և հակադրություն կատարելու համար:

## Կշռադատման փուլի ակտիվ մեթոդներ

Կշռադատման փուլի նպատակներից են՝

- Նոր ստացած տեղեկատվության վերարտադրում իր բառերով և ձևակերպումներով
- Նոր գիտելիքի միաձուլում արդեն ունեցածին

  Իսկ այս փուլում նպատակահարմար մեթոդներից են՝ քառաբաժան,խորանարդում,ելքի քարտ և այլն:

Այս փուլի համար կառանձնացնենք <<Քառաբաժան>> աղյուսակը: Հետաքրքիր մեթոդական հնար է, որը հարմար է հատկապես տեքստի հետ աշխատելիս: Քառաբաժանը արդեն ներկայացված շատ մեթոդական հնարների նման կարելի է կիրառել մեծ կամ փոքր խմբերով կամ անհատական աշխատանք կատարելիս: Աշխատանքը սկսելու համար անհրաժեշտ է մաքուր թուղթը բաժանել 4 մասի: Քառաբաժանը հիմնականում գրավոր աշխատանքի ձև է, քանի որ անհրաժեշտ է մտքերը համապատասխանաբար գրառել 4 բաժիններից յուրաքանչյուրում: Բաժինների հանձնարարությունները պատահական չեն ընտրված, դրանք համապատասխանում են նյութի ընկալման և մտքի զարգացման ընթացքին, հետևաբար, նպատակահարմար չէ դրանք փոփոխել: Կարելի է, իհարկե, դրանք զարգացնել՝ նկատի ունենալով ընկալման և մտածողության մակարդակները / օրինակ՝ ըստ Բլյումի դասակարգման/:

| | |
|---|---|
| Ի՞նչ գիտեի | Ինչպե՞ս կարող եմ օգտագործել |
| Ի՞նչ իմացա | Ի՞նչ եզրակացություն արեցի |

Իսկ սա մեկ այլ օրինակ է.

| | |
|---|---|
| Ի՞նչ էիք տեսնում | Ի՞նչ ձայներ էիք լսում |
| Ի՞նչ էիք զգում | Ի՞նչ կապ տեսար այսօրվա հետ |

Անհատական աշխատանքի դեպքում զույգերն իրենց գրառումները ներկայացնում են միմյանց, ապա՝ ամբողջ թիմին: Զույգի կամ թիմի ընտրությամբ աշխատանքը ներկայացվում է ամբողջ դասարանին: Հնարավոր է, որ ըստ ուսումնասիրվող նյութի՝ կարևորվի տեքստի,պատմվածքի կամ նյութի դիտարկումը որոշակի տեսանկյունով, ինչը կնպաստի, որ հատկապես ուշադրություն դարձվի քառաբաժանի այս կամ այն հատվածի գրառումների վրա, որոնք հատուկ պետք է առանձնացնել ներկայացնել և քննարկել:
Հաջորդը <<ելքի քարտ>> մեթոդն է,որի կիրառությունը նույնպես արդյունավետ է: Լրացվում են 3-2-1 մեթոդով , որը կատարվում է անդրադարձի ընթացքում: Սովորողները պետք է.

- Գրեն երեք բան, որ սովորեցին այդ դասի ընթացքում,
- Երկու բան, որ շատ կարևոր և արդյունավետ են համարում,
- Մեկ բան, որ վաղն անմիջապես կկիրառեն,
- Առաջարկություններ:

Այս հիմնական նպատակներից զատ ընտրված մեթոդները պետք է նպաստեն նաև՝

- սովորողներին հնարավորինս ակտիվ ներառմանը ուսուցման գործընթացի մեջ,
- նրանց գործուն մասնակցության ապահովմանը դասի յուրաքանչյուր փուլին,
- սովորողի ուշադրության հնարավորինս կենտրոնացած պահելուն և ինքնուրույն արդյունքների հասնելուն ուղղորդելուն
- արդյունավետ հետադարձ կապի ապահովմանը:

Այսպիսով՝ կիրառելով այս մեթոդները և ոչ միայն,արդյունքների համեմատությունը ցույց տվեց, որ ուսումնադաստիարակչական գործընթացում ժամանակակից մեթոդների կիրառումը նպաստում է երեխաների ուշադրության աստիճանի բարձրացմանը և այն երխաները, ովքեր չէին մասնակցում ուսումնական գործընթացին, ցուցաբերում են ակտիվություն: Սրա արդյունքում բարձրանում է ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության մակարդակը:
Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ ավանդական դաս վարելիս երեխաների 50 տոկոսը ցուցաբերում է ուշադրության միջին մակարդակ, 15 տոկոսը՝ բարձր, իսկ 35 տոկոսը՝ ցածր մակարդակ: Մինչդեռ ժամանակակից

մեթոդներ կիրառելիս երեխաների 50 տոկոսը ցուցաբերում են ուշադրության բարձր մակարդակ, 40 տոկոսը՝ միջին, իսկ 10 տոկոսը՝ ցածր մակարդակ։






## Եզրակացություն

Ուսումնասիրելով դասավանդման մեթոդները՝ հանգեցինք այն եզրակացության, որ արդյունավետ մեթոդների նպատակային ընտրությունը կարող է նպաստել դասավանդման որակի բարձրացմանը, հանրակրթական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների իրականացմանը: Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է տիրապետի դասավանդման մեթոդների այն բազմազանությանը, որն այսօր մանկավարժությունը կիրառում է: Շատ կարևոր է նաև ուսուցչի արհեստավարժությունը մեթոդների ճիշտ ընտրության համար: Մեթոդների ընտրությունը ,ի վերջո, սերտորեն կապված է կարողունակությունների ձևավորման հետ: Հանրակրթական նոր չափորոշչի պահանջները լավագույնս իրագործելու համար ուսուցիչները պետք է առավել մանրակրկիտ ընտրեն կիրառվող մեթոդները:

## Գրականության ցանկ


1. Ս.Խաչատրյան, Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020:
2. Յու.Ա. Ամիրջանյան,Ա.Ս.Սահակյան, Մանկավարժություն, 2005:
3. Հանրապետական պետական չափորոշիչ

## Հավելված

**Օրվա պլան 1** **05.09.23թ**

| | |
|---|---|
| Առարկան | մայրենի |
| Դասարան | 5 |
| Ուսուցիչ | Գ.Զաքարյան |
| Դասի թեման | Մեսրոպ Մաշտոցը և հայերեն տառերի ծնունդը |
| Դասի նպատակը | Ծանոթացնել Մաշտոցի կյանքին ու գործունեությանը և հայոց գրերի ստեղծման պատմությանը: |
| Վերջնարդյունքները | Բնութագրի գրերի գյուտը՝ հին և միջնադարյան գրականության բովանդակության, պատկերային համակարգի, ազգային արժեքների ժամանակի և տարածության համատեքստում:<br>Մեկնաբանի այբուբենի դերը հին և միջնադարյան գրականության ազգային արժեհամակարգի դրսևորման և մշակութային արժեքների պահպանման գործում: |
| Միջառարկայական կապեր | Պատմություն,գրականություն,կրոնի պատմություն |
| Խաչվող հասկացություններ | Ժամանակ և տարածություն<br>Պատճառ և հետևանք<br>Ահատներ և հարաբերություններ<br>Փոփոխություն և զարգացում |
| Դասի ընթացքը | ***ներածություն.****մուտք,հաճախումներ,կահավորում,տեղաբաշխում,հիգենա -1-2 րոպե*<br>**Խթանման փուլի նկարագրությունը և տևողությունը** ՝ /10ր/<br>Մտագրոհի միջոցով ուսուցիչը վեր է հանում աշակերտների նախնական գիտելիքները տառերի գյուտի,կարևորության,Մեսրոպ Մաշտոցի կենսագործունեության մասին:Նշված բոլոր մտքերը գրառում են գրատախտակին գծված ԳՈՒՍ աղյուսակի Գ բաժնում,ապա Ու սյունակում նշում են հարցերը, որոնց պատասխանները ակնկալում են ստանալ աշակերտները:<br>**Իմաստի ընկալման փուլի նկարագրությունը և տևողությունը** /25ր/<br>Կարճ, բայց բովանդակալից և հետաքրքիր դասախոսությամբ ուսոցիչը մատուցում է նյութը,ընդծում կարևոր դրվագները,մանրամասնում:<br>Կատարում են դասագրքի առաջադրանքները՝ զուգահեռաբար հարստացնելով բառապաշարը, ձևավորելով գրագետ գրավոր խոսք : |

| | |
|---|---|
| | **Կշռադատման, գնահատման փուլի նկարագրությունը և տևողությունը** /10ր/<br>Կատարվում է անդրադարձ հարցերի միջոցով՝ միաժամանակ լրացնելով ԳՈՒՍ աղյուսակի Ս սյունակը: |
| Տնային աշխատանք | Վերարտադրել դասանյութը,գրել էջ 8,առ. 4: |

**Օրվա պլան 2** **11.09.23թ**

| | |
|---|---|
| Առարկան | մայրենի |
| Դասարան | 5 |
| Ուսուցիչ | Գ.Զաքարյան |
| Դասի թեման | «Ոսկի արտ» հեքիաթի բովանդակությունը և գաղափարը |
| Դասի նպատակը | **Զարգացնել** ընթերցելու, կարդացածը վերարտադրելու, հիմնական գաղափարըմատնանշելու, խմբում աշխատելու կարողություններ՝ հարստացնելով բառապա շարը տարբեր տեսակի նախադասությունների կիրառմամբ |
| Վերջնարդյունքները | Տեքստում **զանազանի** գլխավորը երկրորդականից, **կազմի** գրագետ խոսք, **վերարտադրի** լսածն ու կարդացածը՝ պահպանելով դեպքերի տրամաբանական հաջորդականությունը:<br>Տեքստից **առանձնացնի** հեքիաթի գլխավոր միտքն արտահայտող նախադասությունը, **ցույց տա** իրականի և երևակայականի սահմանները: |
| Միջառարկայական կապեր | Պատմություն,գրականություն,հասարակագիտություն |
| Խաչվող հասկացություններ | Ժամանակ և տարածություն<br>Պատճառ և հետևանք<br>Ահատներ և հարաբերություններ<br>Փոփոխություն և զարգացում |
| Դասի ընթացքը | ***ներածություն.****մուտք,հաճախումներ,կահավորում,տեղաբաշխում,հիգենա -1-2 րոպե*<br>**Խթանման փուլի նկարագրությունը և տևողությունը** ՝ /10ր/<br>Մտագրոհի միջոցով ուսուցիչը վեր է հանում աշակերտների նախնական գիտելիքները և բոլոր մտքերը գրառում են գրատախտակին գծված ԳՈՒՍ աղյուսակի Գ բաժնում/Ի՞նչ է հեքիաթը,բնորոշ հատկանիշները,տեսակները,կառուցվածքը և այլն/,ապա Ու սյունակում նշում են հարցերը, որոնց պատասխանները ակնկալում են ստանալ աշակերտները:<br>**Իմաստի ընկալման փուլի նկարագրությունը և տևողությունը** /25ր/<br>Աշակերտները, իրար շարունակելով, ընթերցում են հեքիաթը՝ տալով անհրաժեշտ դադարներ,կատարելով բառային աշխատանք:Գրատախտակին ուսուցիչը գծում է քառաբաժանը/տես՝ Իմաստի ընկալման մեթոդներ/ և լրացնում են խմբային մեթոդով: |

| | |
|---|---|
| | Կատարում են դասագրքի առաջադրանքները՝ բառային և տեքստային՝զուգահեռաբար հարստացնելով բառապաշարը, ձևավորելով գրագետ գրավոր և բանավոր խոսք ։<br>**Կշռադատման, գնահատման փուլի նկարագրությունը և տևողությունը** /10ր/<br>Կատարվում է անդրադարձ հարցերի միջոցով՝ միաժամանակ լրացնելով ԳՈՒՍ աղյուսակի Ս սյունակը։ |
| Տնային աշխատանք | Գեղեցիկ ընթերցել՝ պահպանելով առոգանությունը,գրել էջ 15,բ. առ. 1: |

## Օրվա պլան 3 14.09.23թ

| | |
|---|---|
| Առարկան | Հայոց լեզու |
| Դասարան | 7 |
| Ուսուցիչ | Գ.Զաքարյան |
| Դասի թեման | Գոյական անուն։ Գոյականի տեսակները, անձնանիշ և իրանիշ գոյականներ։ Հատուկ և հասարակ գոյականներ։ |
| Դասի նպատակը | ա) Ձևավորել բառերն ըստ ընդհանուր հատկանիշների դասակարգելու կարողություն և խոսք կազմելու հմտություններ։ բ) Ընդլայնել սովորողի իմացության շրջանակը։ գ) Հարստացնել սովորողների բառապաշարը։ Ձևավորել գոյականը խոսքիմասային համակարգում ճանաչելու, անձնանիշ, իրանիշ, հատուկ և հասարակ գոյականները տարբերակելու կարողություն։ |
| Վերջնարդյունքները | Դասակարգի գոյականներն ըստ ոլորտների և կիրառի խոսքում։ |
| Միջառարկայական կապեր | Պատմություն,աշխարհագրություն |
| Խաչվող հասկացություններ | Օրինաչափություն<br>Պատճառ և հետևանք<br>Կայունություն և փոփոխություն |
| Դասի ընթացքը | ***ներածություն.****մուտք,հաճախումներ,կահավորում,տեղաբաշխում,հիգենա -1-2 րոպե*<br>**Խթանման փուլի նկարագրությունը և տևողությունը** ՝ /10ր/<br>Մտագրոհի միջոցով ուսուցիչը վեր է հանում աշակերտների ունեցած նախնական գիտելիքները խոսքի մասերի,գոյական անվան մասին։Նշված բոլոր մտքերը գրառում են գրատախտակին գծված ԳՈՒՍ աղյուսակի Գ բաժնում,ապա Ու սյունակում նշում են հարցերը, որոնց պատասխանները ակնկալում են ստանալ աշակերտները։<br>**Իմաստի ընկալման փուլի նկարագրությունը և տևողությունը** /25ր/<br>Ուսոցիչը գրատախտակին գրում է դասի հիմնական եզրույթները,ապա մեկնաբանում է՝մատուցելով նոր թեման։ Կատարում են դասագրքի առաջադրանքները՝ ամրապնդելով գիտելիքները։ |

| | |
|---|---|
| | **Կշռադատման, գնահատման փուլի նկարագրությունը և տևողությունը** /10ր/<br>Կատարվում է անդրադարձ հարցերի միջոցով՝ միաժամանակ լրացնելով ԳՈՒՍ աղյուսակի Ս սյունակը և լրացնում են <<ելքի քարտեր>>/տես՝ կշռադատման փուլի մեթոդներ/: |
| Տնային աշխատանք | Անգիր իմանալ նոր եզրույթները,բացատրությունները,գրել էջ 16,առ.5: |